



Ա Ր Ա Ռ Ա Տ

ԿՐՈՆԱԿԱՆ - ԸԱՐՈՅՎԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ - ՊԱՏՄԱԿԱՆ, ԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ՄԱՆԿԱՎԱՐ-
ԺԱԿԱՆ, ԱԶԴԱՇԽՆ ԵՒ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԱՅԻ Խ. Լ. ՏԱՐԻ

ՀԱՄԱՐ ԵՐՐՈՐԴ

ՄԱՐՏ 1897 թ.

ԿՐՈՆԱԿԱՆ - ԲԱՐՈՅԵՎԱԿԱՆ

ԱՄԻՒԹԱՐԵՑՔ, միսիթարեցք զժողովուրդ
իմ, ասէ Հայուած. քահանայք խօսեցարուց
ի սիրո ծրուտաղեմի եւ միսիթարեցէց զատ,
զի լի եղեւ տառապանօց։ Ես. Խ. Լ. -

Սիրեցեալքդ իմ ի Քրիստու.

1. Այս է պատգամը զոր Արտրիչն երկնի
և երկրի և մեր ամենակաղ Տէրը կը յշէ իւր
ծառայից Եսայեայ մարգարէի բերանով։ Ես
և իրեւ յեանեալս ի քահանայական գառու՝
կը զգամ որ Տէր Աստուած այս խօսքերով ինձ
և կը պատուիրէ, որ միսիթարեմ զիմ տա-
ռապեալ ժողովուրդ և ազգ որ անլուր և
անպատում թշուառութեանց և զրկանաց

մատնուած է, և կը չեծէ և կողրայ, ինչպէս
աշխարհի ստեղծումէն մինչև յարդ ոչ մի ազգ
չեծած է։ Այսպիսի ծանր պարագայից մէջ
կը հրամացէ մեզ Աստուած. «Միսիթարեցէք,
միսիթարեցէք զժողովուրդ իմ»։

2. Տէր իմ և Աստուած իմ փառք քեզ
յաղագս ամենայնի օրհնեալ է անուն Քո։ Սա-
կայն ինչպէս միսիթարեմ իմ ժողովուրդ, կամ
նախ ինչպէս ես ինքս միսիթարու իմ երր
զարերով նեղութիւն և տառապանք կրող իմ
ազգս ու Քո սուրբ ժողովուրդ՝ այժմս բնա-
ջինջ լինելու սպառնալիեց ներքոյ կը գտնուի։
Ես ինչպէս միամառու իմ և ժողովրդեանս ինչ-
պէս բացատրեմ այն անօրինակ արհաւ իրներ,

որ վերջին տարիներս եկած են մեր սիրելի հայրենեաց վրայ, ոյն մեր հայրենեաց երկիրն որոյ վերայ կը գտնուեր երբեմն Աստուածատունկ եղեմական զրախան՝ որ այժմ գժոխային խժգժութեանց վայր է փոխուեր, և բիւրաւոր անմեղ մարդոց արեամբ ոռոգուեր՝ մարդկային մի մեծ սպանդանոց է զարձեր, այն գետեր որք երբեմն ականակիտ աղրիւրներէ զօվացուցիչ և առոջարար ջուր կը մատակարարէին եղեմական զրախան՝ այժմ մարդկային արեամբ ներկուեր են և հազարաւոր անմեղների զիակներ կը տանին ծովը կը թափեն: Թագեռսի և Բարդուղիմէոսի սրբազն առաքելոց քարոզութեամբ և ս Դրիգոր Լուսաւորչի և նորա արժանաւոր յաջորդաց ջանիք հաստատեալ Քրիստոսի նկեղեցիք սրբապրզծուեր կամ կործանուեր են: Հայոց ազգի հետ քրիստոնէական լուսաւորութիւնն անշետանալու մերձ է: Տէ՛ր իմ և Աստուածիմ ինչէս միմիթարեմ կամ ինչպէս միմիթարուիմ երբ այս ամենը աչքիս առջե կը տեսնեմ:

Յ. Մինչդեռ ահիւ և դողութեամբ կը կենամ առաջի Աստուածոյ և կը խորհիմ թէ իւր Աստուածային հրաման ինչպէս կատարեմ: իւր ժողովրդեան մնացորդ ինչպէս միմիթարեմ վերստին կը լսեմ Աստուածային պատգամ՝ որ գարձեալ Եսայեայ մարդարէին բերանովն ինձ կը զրկուի: «Ել ի վերայ լերինդ բարձու՝ աւետարանիչդ սիովնի, բարձրացո՞ զօրութեամբ զբարբառ քո՞ աւետարանիչդ Երուսաղէմի. բարձրացուցէք, մի՛ երկնչիք. ասացքաղաքդ Յուղայ՝ ահաւասիկ Աստուած ձեր, ահաւասիկ Տէր, Տէր զայ զօրութեամբ և բազուկն աւերութեամբ իւրով ահաւասիկ վարձք իւր ընդ իւր և գործք առաջի նորա: Նմ յառաջ բերած պատճառներ Աստուածոյ ընդունելի չեն. պիտի անպատճառ միմիթարեմ, պիտի վատահացնեմ ժողովրդեանս, որ Աստուածոյ նախախնամութեան աջն բոլորովին մեղմէ հեռացած չէ. նա երկնքէն կը տեսնէ, ամենայն ինչ արդարութեամբ կը կշռէ ամենայն ինչ մեր յոյսը տակաւին նորա վերայ դնելու եմք, քանզի «Տէր զայ զօրութեամբ և վարձք իւր ընդ իւր»:

Գ. Այս, Տէր, մենք ալ կուզենք միմիթա-

րուիլ քանզի կարի զուրկ եմք միսիթարութենէ. վանք քեզ այս խոսամանդ համար և միայն կը ցաւինք մեր թէրահաւատութեան վրայ. «Յաւել ի մեզ Տէր, զհաւատաս, զյոյս զսերս: Եւ յիրաւի, սիրելի ժողովուրդ, ով ենք մենք որ Աստուածոյ նախախնամութեանը վերայ տարակուսենք, կամ նորա անօրէնութիւններ քննադատինք, որքան աննշան ենք մենք առաջի Աստուածոյ և այս անսահման տիեզերաց մէջ: Երկի երբեմն կը մոռանանք մեր ինչ աստիճանի չնչին արարածներ լինելուն և մեր մոաց վերին աստիճանի անձուկ ու չափաւոր դրութիւն, և կուզենք քննել և հասկանալ այն բաներ, որ տիեզերաց Արարածործի յուիտենական գաղանիքներն են, և մեր հասկացողութենէն բոլորովին գուրս և վեր են: Ամրողջ տիեզերքն և նորա կառավարութիւն հրաշիք և սքանչելեօք շրջապահեալ են, ամեն ինչ Արարչի անհուն իմաստութիւն կը յայտնէ: Երկիրս և աստեղք ու լուսաւորք իւրեանց սքանչելի ներդաշնակութեամբ, լեռներ, ծովեր և գետեր իւրեանց նպատակայրմար ընթացքով, ծառեր և բոյսեր իւրեանց առողջարար քաղցրաճաշակ պրտուղներով և անուշահու ծաղիիներով, կենդանեաց բաղմազն տեսակներ, թէ օդի թռչուններ, ծովաւ ձկներ և ցամաքի անասունք՝ այս ամենը իւրեանց սքանչելի կարդ ու կանոնով խոհական մարդոյն հիացում կը պատճառնեն: Այլ ամենէն աւելի հիացում և սքանչացում պատճառող սաեղծուածք մարդն է, որ իւր մասյին հանճարովն բոլոր կենդանեաց թագաւոր և իշխող հանդիսացած է, և երկրի բոլոր բարիքներ և բերքեր իրեն ծառայեցրներու և պիտոյացներու հնարքը գտեր է:

Մարդն՝ միակ կենդանին որ Աստուածացին պատկեր ու շունչ կը կըրէ և անմահ հոգի ունի, զնսաւած ճանչնալու և խոսավանելու կարողութիւն ունի: Սակայն բնութեան այս բոլոր ճոխութեան և զեղեցկութեան մէջ երբեմն այնպիսի բաներ ես կը տեսնենք, որ մեր վերայ հակառակ ազգեցութիւն կը գործին և աւելի սոսկում ու ստրօտի կը բերեն, կուզեմ ասել՝ այն մեծ աղեաներ, որք երբեմն Աստուածոյ թոյլուութեամբ աւելի կունենան աշխարհիս վերայ, երբեմն երկրաշարժն, եր-

թեմն ծովու ալիքներ ու գետերի յորդումն հողմը ու կայտակն երթեմն հրարս խներ, երթեմն սով ու մահարեր ախտն, որ հաղարաւոր անմեղներ ու բնափր բնափր գիւղեր ու քաղաքներ ի կորուսա կր մասնէ: Կր զարմանքը, թէ ի՞նչպէս Աստուծոյ պատկեր կրող և հոգոյն սրբու ատձար լինելու սահմանեալ մարդոյն թոյ կուտայ աղնպիսի անօրէնութիւններ և խժդութիւններ գործեր որ մեր բարերար ստեղծողի նպատակին բոլորովին հեռու են: Քանզի ի՞նչպէս կարելի է ենթադրել, որ Աստուծ իւր ստեղծուածները կործանելու հրաման տայ առանց մի գորաւոր և օգաակար նպատակի: Այսպէս ես մեր ազգի ներկալ թշուառ գրութիւն, որ թէպէտ մեզ առաջմ անհասկանալի և անբացարելի է, սակայն վստահ եմք որ տակաւին մեր Ստեղծողի իշխանութեան և հսկողութեան ներքոյ կր գանուինք և առանց Աստուծութիւն Հրամանի ըմազ մի ի դիմոյ մերմէ ո՛, կորիցէ: Այսպան կոառածների բուն պատճառը թէպէտե առ այժմ մեզ յայտնի չէ, բայց և այնպէս անհաշիւ և անհպատակ չէ:

5. Բայց ի՞նչ օգուտ, պիտի գոչենք, մեր ալգր զնաց, մեր յոյսեր իդերեւ ելին Հայաստանեալց եկեղեցին անարգուեցաւ, Քրիստոսի արեամբ զնեալ Հայ ժողովուրդ բնաթինջ իշնելու մօտ է, ի՞նչ նպատակ պիտի ունենայ Աստուծ, երբ խաչի թշնամին արսպիսի սոսկալի հարուածներով ու եկեղեցին կը հարուածէ: Բայց Համբերութիւն, գուցէ արժանանքը մէկ օր Աստուծոյ նպատակի տեսնելու, մեր հաւատն արգարեւ բուռն փորձի կենթարկուի, բայց այն է մեծ քաջութիւն, երբ այս սոսկալի փորձանաց հանդէպ չժնողունք մեր հաւատ մէկ մազի չափ խսկ մեր Արարչի նախախնամութենէն շեղի:

6. Մատրերներ ի՞նչ որ Աստուծ անշելում արած է արսպիսի պարագայից մէջ միթէ, պատահած չեն այնպիսի գէուգքեր, երբ մի պազի կամ ժողովրդեան կամ մի արգար դասի վերջին յոյսը կը կարծուէր թէ պիտի հատնի, երբ կը կարծուէր թէ անիրաւ թըշնամին պիտի վերջնական յաղթանակը տանի և արգարութիւնը կորսուի, այլ ի վերջոյ մեր կարծածէն տարբեկալ կը վերջին շեղի:

7. Կարգ միշենք նախկին գարու քրիստոնէից հաւատացներ, որ շատ կը նմանէն կարգացներ ու վետարանն և տեսէք, թէ ի՞նչ ատելութեամբ հրեայք մեր Փրկչին հայածեցին, տեսէք որքան էր նոցա նախանձ երր կը տեսնէն նորա հրաշքներ և կը րսէն նորա ժողովրդականութեանը վրայ, ի՞նչ սատանայական գաւաղրութիւններ կը լարէին նորա գէմ և ի վերջոյ կկարծուէր թէ պիտի յաջուղիւնը գարդապետութիւնը ջնջել երկրիս վրայէն: Եկան ձերբակալեցին զնա և, մեծ Ճիգ թափելով՝ յաջուղեղան զնա մահուան զատապարտել տայ առաջի Պիդատոսի: Խւր մի խումբ աշակերտաց յոյս հատաւ, նորա որ կը յուսային գթրիստոս թագաւորական գահի վրայ նստած տեսնել և իւրեանք իրբեւ մի մին նախարար և իշխան նշանակուիլ նորա պետութեան մէջ, այժմ արտում և յուսահատ կը փախչին, երբ իւրեանց Ճէրը կը կարանաւորեն: Միայն Պետրոս կը հետեւի բայց այն ես շուտով կուրանայ զիւր վարդապետ, երբ ինքզինք փառնդի մէջ կը տեսնէ: Ճրէայք կը կարծէին թէ այլ ևս Քրիստոսի հաւատը ջնջուեցաւ: Աւետարանիը կասէ, երբ խաչի վերայ կախուած էր՝ անցնողները «ՀայՀոգեին զնա յարժէին զբուխը իւրեանց, և ասէին» վահց որ քակէիր դաշնարն և զերիս աւուրս շինէիր զնա, առարեցն զքեզ, թէ որդի ես Աստուծոյ՝ էջ ի խաչէդ: Սոյնպէս և քահանայապետքն ձագէին հանդերձ գարօքն և ծերովք և ասէին: զալս ապրեցոյ, զինքն ոչ կարէ ապրեցուցաներ, եթէ թագաւոր է Նարայէլի՝ իջցէ այժմ ի խաչէդ, և հաւատացուք զմա, եթէ յուսացաւ յԱստուծ, փրկեսցէ այժմն զգա: քանզի ասաց եթէ Աստուծոյ որդի եմ: Սակայն խընդիրը փոխուեցաւ Յարութեան կիրակի առաւաւու, երբ Ճէրն մեր «Յաղթահարեաց զգրունս զժոխոց և երոյծ զրանութիւն մահոււ»: Փոխանակ խաչի մահուամբ քրիստոնէութիւն ջնջուելու, նոյն խսկ այդ խաչն եղաւ: Հալածուած կրօնի յաղթական նշան, և այդ անարգական մահուան զործիքն գարձաւ կինդանութեան և հանդերձնալ կինաց առհաւատեայ:

7. Կամ միշենք նախկին գարու քրիստոնէից հաւատացներ, որ շատ կը նմանէն

մեր ազգի կրած ներկայ հալածանքին, և նըսպատակը միևնոյն էր, որպէս մեր ներկայ հալածոցներինը՝ Քրիստոնէութիւնը կու զէին բընաջնջ անել, և այս նպատակին հասնելու համար՝ միևնոյն միջոցների կը զիմէին, որպէս մեր ներկայ թշնամիք, զոմանս նաւթով կօծէին, և ապս կայրէին, զոմանս կը խաչէին, կամ կը տապակէին, վայրէնի կենդանեաց առաջ կը ձգէին, մարմիններ կը յօշոտէին, գյոքերը յարքունիս կը զրաւէին, աքսոր, բանտարգելութիւն և ամենատեսակ կտանք և չարչարանք ի գործ կը դնէին առանց հասակի կամ սեռի խնայելու, և այնպիսի սաստկութեամբ, որում միայն մեր ազգի ներկայ թշնամիները կարողացեր են գերազանցել: Հեթանոսք կը յուսային այդուքրիստոնէութիւնը ջնջել: Բայց այդ հալածանք զայն աւելի տարածելու օգնեց, և ըստ ասութեան սուրբ հարց թէ Արքւն մարտիրոսաց՝ սերմն եկեղեցւոյց այն թափուած արիւնը սերմի պէս, երբ քրիստոնէութեան գարունն եկաւ, սկսաւ բուսնիլ և աճիլ և բաղմապատիկ պտուղներ տալ:

8. Այս՝ «Արքւն մարտիրոսաց, սերմն եկեղեցւոյց»: Հայսատանեայց եկեղեցին այժմ հաւատոյ սերմերն առատօրէն կը ցանէ իւր մարտիրոսաց սուրբ արեամբ: Անպատճառ այն Աստուածն, որ խոսացեր է զմեզ պաշտպանել և կը վստահացնէ թէ՝ «Մազ մի ի գիւղ ձերմէ ոչ կորիցէ» չպիտի թողու որ այդ սերմեր ապարդիւն մնան գետնին մէջ: Մեր ազգի ներկայ թշուառութիւն ուղղախոհ մարդուն և հաւատացեալ քրիստոնէի համար մի մեծ մխիթարական կողմ ևս ունի: Այս ահսելի հալածանաց ներքոյ մեր ազգ Քրիստոսի հաւատին հրաշափառ վկայութիւն կը տայ, նա ցոյց կը տայ որ կրօնքն իւր համար մի սոսկ անուն չէ, այլ նա կզբայ զոր ինչ առեսարանը կը վարդապետէ: Նորա համար երկնից արքայութեան շահեր զեր ի վերոյ են քան բոլոր ուրիշ շահեր:

9. Յիրաւի սքանչելի է մեր ազգի անվեհեր վստահութիւն ի Քրիստոս, նորա անսասան հաւատք ի Տէր, այն հաստատամութիւն որով նա իւր կրօնի սկզբանց վրայ կը մնայ առանց ու և է ուրիշ նկատման, և

մինչեւ իսկ իւր կեանքը կը զոհէ ի սէր այդ սկզբանց:

Այս ամենը պանչելի չէ ինն և տասնեւրորդ զարումն երբ կը տեսնենք մեր շուրջը բոլոր լուսաւորեալ կոչուած ազգերը որք արգարե սկզբանց և կրօնի վարդապետութիւն ունին, զեղեցիկ և հոյակապ շէնքեր և հասաւատութիւններ ունին, շքեղ եկեղեցական հանդէսներ կը կատարեն, բայց երբ իրենցմէ մատը տանդով ծակելու չափ անձնութրութիւն պահնանջուի ի սէր իւրեանց խոսափանեալ կրօնի, այն ժամանակ իւրեանց յարարիրութիւնը կրօնի հետ կը լարուի և անձնական ու աշխարհային շահեր միշտ կը նախադատուին:

Հրաշալի չէ, որ մեր ազգն իւր կեանքն և մինչեւ իսկ իւր զոյութիւնը կը զոհէ ի սէր Խաչեցելոյն, մինչդեռ զրեթէ ամբողջ Նւրուպա նիւթապաշտութեան խաւարին մէջ խորասուղուած՝ իւրեանց սկզբունքն է անձնասիրութիւն, և այդ սկզբանց ամեն ինչ զոհելու յօժար են:

10. Եթէ քրիստոնէական սկզբունք մեր ազգի մէջ խոր արմատ ձգած շինէր, եթէ մեր սրտեր անդրդուելի հաւատով ս. Աւետարանի հետ կապուած շինէին, այս սոսկալի հարուածներէն ապատուելու ուրիշ ինչ զիւրին ճար կար քան թէ զիրիստոս ուրանալ և սուտ մարգարեին հպատակիլ մէկ խորով՝ մահմետական գառնալ: Ոչ ապաքէն ամեն հաւանակէ զերծ կը լինէինք և աշխարհային պատույ և փառաց արժանի կը համարուէինք: Մեր գյոքերին տէրը կը լինէինք, մեր սիրելի ներէն չէինք բաժնուեր և վաղահաս մահուանէ կազմառուէինք:

11. Բայց այս բոլոր ազէտից և թշուառութեանց մէջ մեր ազգի փառաց զսակ կը կազմէ այն սկզբունք, զոր սուրբն Եղիշէ իւր ոսկեղինիկ զըսով մեր սրտերի մէջ խորապէս ապառուեր է, «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է»:

12. Արդարէ մեր ազգի վերջին քանի տարուաց պատմութիւն լի է արիւնչեղութեան սոսկալի անցքերով սկսայն պիտի շըմուանանք՝ այս սոսկալի արիւնչեզութիւնք իսկ մեր պատմութեան ամենափառաւոր էջերը կը

կազմեն, որովհետեւ այս պատմութիւն անլուր հերոսութեան և նահատակութեան անցքեր պիտի առանգէ աշխարհիս ապագայ սերունդներին, անմեղ հայ քրիստոնեայ մանուկների արեան մուխը մինչև յաւիտեան պիտի բարձրանայ յերկինս և մի լուսափայլ սիւն պիտի կազմէ ի մէջ Հայաստան աշխարհի և Աստուծոյ ամոռոյն. հայ քրիստոնեայ կուսանաց և ամինանց արիասիրա ժուժկալութիւն Շաքէի և իւր նմանեաց անվեհերութիւն՝ եղական տեղ պիտի բռնէ աշխարհիս պատմութեան մէջ: Ե յաւիտենական յիշատակ պիտի արձանագլուխի, որ հայոց ազգն իւր անզրդուելի հաւատովն մահը կընզգրէի ի սէր Քրիստոսի մինչդեռ քրիստոնեայ կոչուած հզօր ոյժեր իրար նախանձելով և վախենալով, թէ մի գուցէ մինը միւսէն աւելի յառաջ երթայ՝ անշարժ կեցեր կծիծաղին. Քրիստոսի վերայ, որ Հայաստանի մէջ այժմ վերստին կը խաչուի: Պրկին աշխարհի իւր անարատ բազուկներ այժմ Հայտատանի մէջ միւսանգամ բարձրացուցած խաչի վերայ վերստին կը գոչէ: Ելի՞ Ելի՞ լամայ սարազթանի՞՝ կը նայի իւր անունը կրող Եւրոպայի ազգաց վերայ արտութեամբ. իսկ նոքա ի՞նչ կանեն, ի՞նչ կը պատասխանեն: «Հայ» ոյին զնաւ շարժեն զլուխս իւրեանց և ասեն՝ ասզրեցն զքեզւթէ որդի ես Աստուծոյ էջ ի խաչէդա:

13. Իրաւ է, սիրելի ժողովուրդ, մենք մացողներս կը արտմինք և կը ցաւինք այս մեր ազգի դժբախտութեան վերայ, սիրելերիս կը մորմոքի մեր այն բազմաթիւ ազգակիցների բարեկամաց և մերձաւորաց համար որք առանց յանցանքի շարաչար մահուամբ անցեր են այս աշխարհէ: Այս է մեր զգացում և մեր տեսակէտ: Բայց մին էլ հարցնենք, թէ զնացողներն իրենք ներկայ ի՞նչ դրութեան մէջ են և ի՞նչ կը խորհին: Նոքա այժմ իւրեանց մարտիրոսական մահուան փառքով պակռւած՝ կը վայելին Աստուծոյ երանաւէտ տեսութիւնն, հազարաւոր Հայերի հոգիք այժմ խառնուած Աստուծոյ հրեշտակաց հետ՝ երկնային սրբասացութիւններ կերպն, և եթէ մի վիշտ ունին՝ այն է որ այժմ սենապայծառ կերպիւ կը տեսնեն այն սոսափ տեսարան, որ քրիստոնեայ կոչուած աղ-

գաց անտարբերութիւն կը ներկայացնէ. Կը ցաւին որ մինչդեռ Եւրոպից իշխանք և թագաւորք իւրեանց իշխանութիւն չշնորհօք Աստուծոյ ստացած են և ունին՝ մի խօսք անգամ չեն ուզեր ասել Աստուծոյ եկեղեցւոյն ինպատճ և ամենասոսկալի ոժիրներ ու խրժագործութիւններ թոյլ կը տան որ կատարուին Աստուծոյ ժողովրդեան վերայ: Այն բազմերամ հայ սուրբերն այժմ առաքելոց, մարդարէից և նախակին եկեղեցւոյ և Հայրապետաց և մարտիրոսաց հետ միասին կը ցաւին, որ Քրիստոսի անունը կրող և առաքելոց յաջորդ համարուող եպիսկոպոսներ և Հայրապետներ՝ փոխանակ իրապէս զգալու այն հարուածներ, որ իւրեանց հասարակաց կրօնին կուղղուին, իւրաքանչիւրն կը խորհի թէ այս խառնիձաղանձ զրութենէն ի՞նչ անձնական կամ նիւթական օգուտ կարող է քաղել կամ իւր աղանդի համար կամ իւր երկիր և ազգի համար:

14. Այն սուրբերն ի յերկնից զմեզ կը քաջալերեն և կասեն: միիթարուեցէք և մի յուսահատիք, «մի զարհուրիք յայնցանէ որ սպանանեն զմարմին, և յետ այնորիկ աւելի ինչ ոչ կարեն առնելի ոյլ երկնչիջիք յայնմանէ, որ յետ սպանանելոյ ունի իշխանութիւն արկանել ի գեհին»:

Փառք քեզ տէր, փառք քեզ այս բոլոր երանութեանց համար: Այլ այժմ բաւէ եկեղեցւոյդ հալածանք՝ հաս օգնութիւն, բարեխօսութեամբ այն հազարաւոր անմեղ Հայերի, որք աշխարհիս թշուառութիւններն յաւիտենական երանութեանց և յաղթական եկեղեցւոյ փառաց հետ փոխանակեցին: Ե՞կ փութով և օգնիր ըստ խոստման Բում թէ, «Հաւատիկ Աստուծած ձեր, ահաւատիկ Տէր, Տէր գայ զօրութեամբ իւրով և վարձք իւր ընդ իւրա: Եւ մեք ընդ երկնային սպարսն փառու տացուք հօրդ և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս: Ամէն: *

Թորոս քահ. Զողոյեցի.

* Խօսուած է Հօնվօնի և Յովհաննու Եկեղեցւոյ մէջ: